«ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

0015, ք.Երևան, Զաքիյան 10, հեռ.՝ (+374 10) 56-14-21, էլ.փոստ՝ agency@spm.am

«30» օգոստոսի 2024թ.

N Ե- 258

«ԱՄՕՊՐՈՖ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԻՆ
/հասցե ք.Երևան,Բաբաջանյան 28 շ 26բն, էլ. փոստ amoprof1@mail.ru/

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Օհանյան

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ԱՄՕՊՐՈՖ» ՍՊԸ միջև 28.12.2023թ կնքվել է «ԳԳԱԿ-ԳՀԾՁԲ-25/5/Օ» ծածկագրով «Ջեռուցման, հովացման և օդափոխության համակարգի սպասարկման ծառայությունների» ձեռք բերման պայմանագիր, ըստ որի պետք է մատուցվեր Կառավարական թիվ 2 և Վ.Սարգսյան 3/3 շենքերում տեղակայված MITSUBISHI ELEKTRIK «VRF» հովացման և ջեռուցման և MITSUBISH «LOSSNAY» օդափոխության համակարգերի տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ:

1.1 կետի համաձայն Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Ջեռուցման, հովացման և օդափոխության համակարգի սպասարկման ծառայությունների» մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով պայմանագրի կատարման ժամկետ է սահմանված՝ պայմանագրերն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2024թ.ներառյալ:

Համաձայն Ձեր 27 օգոստոսի 2024թ գրության «ԱՄՕՊՐՈՖ» ՍՊԸ-ն հրաժարվում է մատուցել «ԳԳԱԿ-ԳՀԾՁԲ-25/5/Օ» պայմանագրով նախատեսված ծառայությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավոր է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱՄՕՊՐՈՖ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«ԱՄՕՊՐՈՖ» ՍՊԸ-ին տրվում է 10 օրացույցային օր տուժանքով սահմանված գումարները՝ պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարած մասի համար անհրաժեշտ որակավորման ապահովման 156250 /մեկ հարյուր հիսունվեց հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամ և պայմանագրի չկատարված մասի ապահովման 104167 / մեկ հարյուր չորս հազար հարյուր վաթսունյոթ/ ՀՀ դրամ, ինչպես նաև պայմանագրի 5.3 և 5.2 կետերով սահմանված տույժերը և տուգանքները՝ 26250 /քսանվեց հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամ՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի ՀՀ ՖՆ գործառնական վարչություն 900018002981 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «ԱՄՕՊՐՈՖ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը կուղարկվի լիազորված մարմնին, իսկ «ԱՄՕՊՐՈՖ» ՍՊԸ կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը՝ պայմանագրի ապահովում և որակավորման ապահովում, սահմանված կարգով կներկայացվի «Արդշինբանկ» ՓԲԸ վերոնշյալ գումարները գանձելու և «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի ՀՀ ՖՆ գործառնական վարչություն 900018002981 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐԱ ԽԼՈՅԱՆ

Կատարող՝ Արմինե Միրումյան
ֆինանսական և հաշվապահական հաշվառման
վարչության պետի տեղակալ
Հեռ.՝ (010) 54-07-34